




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

155

492
201



ՀԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ, ժխտել'ը

ՄԵՐ ՄԵԾ ՏՈՆԸ

(Նվեր պատանիներին)

Հոկտեմբերյան Մեծ Հեղափո-
խության VI տարեդարձի
առթիվ:

Հ. Մ. Մ. 15.157



Լ Ե Ն Ի Ն

Հրատարակութիւն Սիւր-պոլի
Գալլուսթանի
1923 թ. Հոկտեմբեր,
Տիրաժ 4000 ող.



201-ԱԳՀ

Տպարան Կոմ. - Տնտ. Ալեք-պոլ

ՍԻՐԵԼԻ՝ ՓՈՔՐԻԿ ԸՆԿԵՐ

Այսօր Հոկտեմբերյան Մեծ
Հեղափոխութեան վեցերորդ
տարեդարձն է. այսօր լքա-
նում է ուղիղ վեց տարին են
որից, յերբ բանվորներն ու
չքավոր դյուղացիները կոմու-
նիստների գեկավարութեամբ
այդ մեծ հեղափոխութեանը
առաջ բերին 1917 թվին:

Գուցե դու մտածես, թե
այս բոլորը քեզ չի վերաբե-
րում, քո խելքի բանը չէ.
բայց դու սխալվում ես. դու
պետք է իմանաս, թե վճռն
է աշխարհքի չարն ու բարին,
— մարդկանցից վճռոնք են
ուղիղ մտածում և հոգ տա-
նում աշխարհքի մասին և վճ-
ռոնք ծուռը ճամբով են գը-
նում և աշխարհքին ենքան
ցավ պատճառում:

Դու չես կարող այս հարցերով չզբաղվել, քանի վոր ամեն ոք քո շուրջը տեսնում ես և՛ հարստին, և՛ աղքատին, դու տեսնում ես անդործին, վորը վռչինչ չի անում և կուշտ ուտում է. դու տեսնում ես ամբողջ որն աշխատողին, վորը միշտ էլ կիսաքաղց է:

Դու դրանց մեջ ես ապրում. դու կարող ես և պարտավոր ես այդ հարցերով զբաղվել. ու յերբ մի քիչ ել կմեծանաս՝ կկռվես արդարության համար, բանվոր-աշխատավոր մարդկանց դրությունը թեթևացնելու համար:

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Մեզնից յոթ-ութ տարի առաջ ամբողջ Ռուսաստանում, ինչպես նաև մեր յերկրում, թագավորի իշխանու-

Թյան ժամանակ սարսափելի
որեր եյինք ապրում. ամեն-
քին ծեծում եյին, բանտերը
լցնում, ժողովուրդը մեռնում
եր քաղցից, հիվանդություն-
ներից, իշխանավորների ան-
խիղճ վերաբերմունքից. դը-
րանք և հարուստները ավա-
զակային պատերազմներ եյին
սարքում, միլիոնավոր խեղճ
մարդկանց կոտորել տալիս և
իրանց գրպանները հարստա-
ցնում:

Բանվոր, աշխատավոր ժո-
ղովրդի դրությունը լավա-
ցնելու մասին չեյին մտա-
ծում. նրանց վերջին կոպեկը,
չուլն ու փալապը խլում եյին
իշխանավորի ոգտին, իսկ իշ-
խանավորները հարուստ
կյանք եյին անցկացնում:

Այդ իշխանավորներն եյին՝
թագավորը իր մինիստրնե-
րով, չինոմնիկներով, մեծ

վաճառականները, կալվածա-
տերերը (մեծ հող ունեցող-
ները), բանկիրները, յեպիս-
կոպոսներն ու տերտերները,
վորոնք վոչինչ չեյին անում
և բանվոր ~ գյուղացիներին
խաղաղություն, հնազանդու-
թյուն եյին քարոզում, թե
վերջին շապիկդ ել տուր, են
աշխարհում արքայություն
կգնաս. այդպիսի քարոզը
ձեռնառու յեր իշխողներին,
դրա համար ել տերտերներին
ու յեպիսկոպոսներին թագա-
վորը լավ եր պահում. այդ
սուտ քարոզների համար նը-
րանց ոռճիկ եր տալիս:

Ո՞ՎՔԵՐ ԵՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

Այդ սարսափելի դրությու-
նը (այդպես շարունակվել չեր
կարող: Վերջապես բանվոր-
ները հավաքվում են և կազ-
մում իրենց կուսակցությու-

նը, վորը կոչեցին բոլշևիկա-
կան կամ կոմունիստական
կուսակցութիւն։ Այդ կու-
սակցութիւնը շարունակ կըռ-
վում եր թագավորի, մինիս-
տրների, նրանց շինովնիկնե-
րի, հարուստների և տերտեր-
ների դեմ։

Կոմունիստական կուսակ-
ցութիւնը մտածում և
աշխատում է հասարակու-
թյան բարեկեցության մա-
սին, աշխատում է, վոր հա-
րուստ և աղքատ չլինին, վոր
մարդիկ հաժապար աշխատեն
և հաժապար լավ ապրեն, մի-
ակերպ հանգիստ վայելեն,
արդարութիւն լինի յերկրիս
վրա։ Կոմունիստ խոսքը հըռ-
շակ է ստացել մեզնից 70
տարի առաջ մեր մեծ ուսու-
ցիչներ Մարքսի և Ենգելսի
ժամանակից, նրանց գրած
«Կոմունիստական Մ ա ն ի-

Ֆ ե ս տ» նշանավոր գրքից:

Կոմունիստական կուսակցությունը այն կուսակցությունն է, լորը ղեկավարում է բանվորա-գյուղացիական մեծ հեղափոխությունը, իսկ այդ հեղափոխությունը աշխատավորությանը մեծ հաղթանակներ պարգևեց:

Կոմունիստները հակառակորդներ են ավագակային պատերազմների, վորոնք տեղի յեն ունենում հարուսանների ոգտի համար:

Կոմունիստները կողմնակից են և ղեկավարում են քաղաքացիական պատերազմները, այսինքն բանվոր, չքավոր, գյուղացի դատակարգի հետ միանալով, կովում են հարուստ դատակարգի դեմ:

Կոմունիստները—այդ այն կուսակցությունն է, լորը կոչ է անում բոլոր ազգերի

և յերկրների բանավորներին,
աշխատավորներին, վոր մի-
անան և մի մեծ միություն
կազմեն:

Ռուսաստանի կոմունիստ-
ները 1919 թ. կոչ արին բո-
լոր յերկրների բանավոր-աշ-
խատավորներին՝ միանալ, այդ
միությունը գլուխ յեկալ և
կոչվում է կոմունիստական
Ինտերնացիոնալ:

Բանվոր - աշխատավորների
այս միությունից սարսա-
փած՝ հարուստները, յեպիս-
կոպոսներն ու գեներալներն
եւ միացել են, և այժմ ամ-
բողջ աշխարհը բաժանված է
յերկու բանակների—բանվոր-
ների և հարուստների: Բան-
վորների ինտերնացիոնալի
կուռ հարվածների տակ որե-
ցոր ջախջախվում և մեռնում
է հին աշխարհը:

Դրա համար ել կոմունիստական կուսակցութեանը թըշնամի յեն հարուստներն ու տերտերները:

Ահա այդ կոմունիստներն էլին — հարյուր հազարավոր բանվորներ — վոր 1917 թ. Ռուսաստանում առաջ բերին Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխութեանը և հիմնեցին Խորհրդային Խեխանութեան: Այդ — բանվորների, աշխատավորների իշխանութեանն է, վորովհետև խորհրդային հանրապետութեանների բոլոր հաստատութեաններում ընտրութեաններին մասնակցում են միայն նրանք, վորոնք ապրում են միայն իրենց, և վոչ թե ուրիշի աշխատանքով:

«Յեկերի ամբողջ իշխանութեանը Խորհուրդներին» — (աշ-



Լ Ե Ն Ի Ն

Համաշխարհային հեղափոխական
պրոլետարիատի առաջնորդը:

խառաժոր դասերի ներկայացուցիչներից ընտրված մարդկանց)։ այս միտքը առաջին անգամ 1917 թվի ապրիլին հռչակեց կոմունիստները (բոլշևիկները) կուսակցությունը՝ Լենինի գլխավորությամբ։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒ- ԹՅՈՒՆԸ

«Ամբողջ իշխանությունը խորհրդաներին» — այս միտքը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ յերկրում, միացրեց բոլոր ուժերը, և հոկտեմբերյան հեղափոխությամբ կործանվեց նախկին կառավարությունն ու սահմանվեցին նոր կարգերը, վորոնց մեջ ժողովուրդը, թեև մեծ զրկանքների գնով, սկսեց ազատ շունչ քաշել և իր գլխի ու աշխատանքի տերը վրնել։

Հոկտեմբերյան հեղափո-
խությունը ազնվական դասա-
կարգից, հոգևորականներից
ու կալվածատերերից իւեց
միլիոնավոր դեսիատին հողե-
րը և այդ ամբողջը վերա-
դարձրեց իր տերերին— աշ-
խատավորներին, վերջ տվեց
միջազգային պատերազմին:

Ջնջեց նախկին կառավա-
րությունների արած պարտ-
քերը, վորոնք ծանրացած
եյին բանվորների և գյուղա-
ցիների մեջքին:

Բանկերը, գործարանները,
գավոզները, հանքերը խլվե-
ցին հարուստներից և տրվե-
ցին աշխատավորներին:

Այժմ բանվորներն են վո-
րոշում, թե որեկան քանի ժամ
պետք է աշխատեն և ինչքան
աշխատավարձ պետք է ստա-
նան (առաջ խաղեյինի քե-
ֆից եր կախված. մարդկանց

աշխատեցնում եյին նույն
խսկ 14 ժամ չնչին աշխատա-
վարձով). ամեն տեղ կազ-
մված են արհեստակցական
միութեայուններ, վորոնք պաշտ-
պանում են աշխատավորի
իրավունքը:

Վերջ արվեց վանքերի և
հոգևորականների իշխանու-
թյանը. հարյուր հազարավոր
հոգևորականներ՝ մինիստրներ-
ից ոսճիկներ ստանալով,
իրենց կեղծ քարոզներով
խաբում եյին աշխատավորու-
թյանը. դրանք՝ հավաքված
վանքերում՝ առանց քրտնելու
ահագին հարստութեայունների
տեր դառնալով, շուտ կյանք
եյին անցկացնում. այժմ այդ
չըկա. դրանք գուրս արվեցին
վանքերից, վոր գնան աշխա-
տեն և իրենց աշխատանքով
ապրեն. կրոնն ազատ հայ-
տաբարվեց. այժմ ով ինչ

կրան ուղղում ե, կարող ե դա-
վանել, յեթե այնքան տգետ ե,
վոր հավատում ե այդ խա-
բերայությանը: Պետությու-
նըն այլևս ոռճիկ չի տա-
լիս հողերականներին, վո-
րոնք միայն խաբում են ժո-
ղովրդին իրենց կեղծ աղոթք-
ներով:

Բոլոր դպրոցների դռները
լայն բացվեցին աշխատավոր
ժողովրդի զավակների առաջ.
հիմնվեց աշխատանքի միաս-
նական դպրոց, ամեն ջանք
գործ ե դրվում, վոր միան-
գամայն վերջ տրվի վոչ մի-
այն մանուկների, այլ ե հասա-
կավորների անգրագիտու-
թյանը:

Իսկական հեղափոխական-
ների՝ բանվորների զեկավա-
րությամբ կազմվեց մի ուժեղ
գործ—կարմիր բանակ — վոր
ամուր պաշտպան հանդիսա-

ցամ հեղափոխութեանը և իր
կատարած քաջագործութեան-
ներով ամբողջ աշխարհի ու-
շաղիւթեանն ու դարմանքն
և վայելում:

Այս բոլորն արեց 1917
թվի Հոկտեմբերյան Մեծ
Հեղափոխութեանը, իսկ այդ
հեղափոխութեանը ղեկավա-
րում եր Կոմունիստական
(բոլշևիկների) կուսակցու-
թեանը:

Հոկտեմբերյան հեղափո-
խութեան ալիքները նորից
ցնցեցին անգործների, կուշա-
դատարկապորտների, աշխա-
տավորութեանը շահագործող-
ների աշխարհը:

Հեղափոխութեան կայծակ-
ները լուսավորեցին ամբողջ
աշխարհի դարավոր ստրուկ-
ների վրայը, յերմ համակրան-
քով հապեցին կոմունիստա-

կան (բողջեկների) կուսակ-
ցութեան հետ. հեղափոխա-
կան կրակն այժմ բռնկված
է նաև Գերմանիայում, և շու-
տով Գերմ. պրուստարիատն
ևս կը հաղթանակի:

Կոմմունիստները, քանդե-
լով հին կարգերը, այս վեց
տարվա ընթացքում անդադար
աշխատանքով ապացուցեցին,
վոր ընդունակ են նաև շինելու:

Յեվ մեծ պատերազմից հոգ-
նած, քայքայված մեր յերկի-
րը այժմ շունչ և քաշում.
այժմ խաղաղ և մեղմաջան
շինարար աշխատանք և տար-
վում մեր յերկրում:

Վողջմէյն Հոկտեմբերյան
հեղափոխութեան արեղակին:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Սիրելի փոքրիկ բնիկեր! Այս
քանի տողն ել ուշադրութեամբ
կարդա. մի քիչ ել ուղղում եմ

խոսել Հայաստանի մասին:

Յերեք տարի յե, վոր Հայաստանի բանվորներն ու չքավոր գյուղացիները իրենց սլաշտպան կոմունիստների (բոլշևիկների) գլխավորութեամբ յերկրից խուկեցին դաշնակներին, բոլոր հին կառավարիչներին, փոխեցին նրանց դրած կարգերը, ժողովրդին կառավարելու նոր սրենքներ ու յեղանակներ ստեղծեցին: Կոմունիստները ամենից առաջ բանվորին ու գյուղացուն ազատեցին բուրժուաներին (հարուստներին) ու նրանց հլու-հալատակ գործակատարներին ծառայելուց և սովետական (խորհրդային) կարգեր ստեղծեցին ու ամբողջ աշխարհի պրոլետարիատի (բանվոր-դասակարգի) հետ կապեցին, նրանց թիկունքը ապահովելով բուրժուական

Թալանչիներից: Այդ եր պա-
հանջում հայ աշխատավորու-
թյան յերջանկությունը:

Տարիներ շարունակ դաշ-
նակները՝ հային թշնամա-
ցնելով իր հարևան բոլոր ազ-
գերի հետ, յերկիրը դժոխք
դարձրին, կոտորվեցին թուրք
զյուղեր, կոտորվեցին, բնա-
ջնջվեցին հայ գյուղեր: Հա-
յաստանի կառավարիչները,
խաբված յեվրոպական բուր-
ժուաների քաղցր կաթից, մո-
ռացան աշխատավորության
շահը—արյան դաշտ քշեցին
աշխատավորությանը. տարի-
ներ շարունակ մեր յերկրում
տեղի ունեցող կռիվները, վոր
ղեկավարում եյին խմբապետ
Թալանչիները, բոլորովին քայ-
քայեցին մեր ժողովրդին: Ար-
տաքին թշնամիների վտանգից
ու պատճառած սարսափնե-
րից դատ՝ յերկրի, ներքին



Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայաստանի Սոցիալիստական
Խորհրդային Հանրապետության
Կենտրոնական Գործադիր Կոմի-
տեյի Նախագահ:



THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
540 EAST 57TH STREET
CHICAGO, ILL. 60637



ՍԱՐԳԻՍ ԼՈՒԿԱՇԻՆ

Հայաստանի Սոցիալիստական
Խորհրդային Հանրապետութեան
Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Նախագահ.



01740 104651

Supplement: 104651
Supplement: 104651
Supplement: 104651
Supplement: 104651

անիշխանությունը, արան-թա-
լանը, սպանությունները լրա-
ցնում էին ընդհանուր պատ-
կերը:

Այժմ այդ չկա. այժմ մեզ
շրջապատող բոլոր հարեան
ազգությունների հետ բարե-
կամ ենք: Այդ բաժական չե.
այժմ նրանք մեզ ոգնում են
ամեն խնդրում. այժմ հայն
ու Հայաստանում դարեր շա-
րունակ ապրած և դաշնակ-
ների կողմից «մաքրված»,
վոխերիմ թշնամի ճանաչված
թուրքը վերադարձել են իրանց
նախկին վաթանը և խաղաղ
ապրում են իրար հետ կողք-
կողքի:

Մեր Թորհրդային իշխա-
նությունը յերեկվա արյուն-
արբու մառդերիստներին ան-
գամ ներել է և խաղաղ աշ-
խատանքով պարապել հար-
կադրել:

Տարիներ շարունակ Հայաստանի յերեք գյուղացուց յերկուսին կռվի դաշտն եյին ուղարկում: Այս «մարտիկները» ամեն դիրքերում կոտորվում եյին կամ լավագույն դեպքում փախչում: Այսոր ունենք մի ուժեղ բանակ՝ սակաւաթիւ, սակայն վարժ ու դիմացկուն, վոր պատրաստ է հետ մղելու բոլոր հարվածները, վոր մեր թշնամիները կը հանդգնեն ուղղելու հեղափոխութեանն ու աշխատավորութեան շահերին:

Դաշնակները խանգարեցին յերկրի ամեն հաղորդակցութիւնը, յերկաթուղիները, քայքայեցին մեր տնտեսութիւնը, խաղաղ ստեղծագործական աշխատանքը մոռացութեան տալով՝ զարկ տվին ալան-թալանին և Յեզրոպա-

յից ղրկված փշրանքներով
կապեցին այդ դժոխք դար-
ձած յերկրի արնաքամ աշ-
խատավորութեան աչքերը:

Աչքաթող եր արված հո-
ղագործությունը, չեր մտած-
վում տնտեսութեան մասին,
վորովհետեւ լացի, սգի, վոր-
բերի և տնանկների մառ-
գերիստ կառավարիչները շատ
լավ էին զգում, վոր իրենք
միորյա թագավորներ են:

Սորհրդային իշխանությու-
նը բժշկեց յերկրի այդ սար-
սափելի վերքը. — հողագոր-
ծությունը, յերկաթուղին վե-
րականգնեց, հողագործու-
թեան և տնտեսութեան վրա
առաջին հերթին ամենալուրջ
ուշադրությունը դարձրեց,
հսկայական ջանքեր գործ
դնելով, Ռուսաստանի ոգնու-
թեամբ լիուլի ցանել տվեց
խոպանացած դաշտերը, գործի

զցեց գործարաններն ու արհեստանոցները, մի շարք ջրանցքներ անցկացրեց, անհաժառար կռիվ հայտարարելով տնտեսական ֆրոնտում, կշտացրեց հարյուր հազարավոր սովյալներ ու ամենքին խաղաղ աշխատանքի հրավիրելով՝ այժմ զբաղված ե մեռած յերկիրը կենդանացնելով:

Դաշնակները հայ վարժապետին ու աշակերտին ելեյին տարիներ շարունակ կռվի դաշտ դրկում՝ փակելով դըսրոցները: Պատանեկուլթյունը այլասերվել էր: 17 տարեկանները՝ մատուցերները կապած թալանչիներ եյին դարձել: Բոլշևիկներին իշխանությունը իսկույն բաց արավ դպրոցները և գրիչ ու թանաք, գիրք ու լրագիր տվեց ամենքի ձեռքը:

Դաշնակցական կուսակցութ-
 թյունից (մեր յերկրի նախ-
 կին կառավարիչներից) այժ-
 մյան խորհրդային իշխանու-
 թյունը ժառանգությունս ստա-
 ցավ Հայաստանը, վոր հրի
 ու սրի, լացի ու կոծի, ալան-
 թալանի մի անիշխանական
 յերկիր եր, ուր պատերի տակ
 կոխկռտվում և սովից նվա-
 լով մեռնում եյին հազարա-
 վոր վորրեր (միայն դրանց
 թիվը յոթանասուն հազարի
 եր հասնում, վորոնք բոլորը
 հավաքված և տեղավորված
 են ապաստարաններում)։
 Այսոր փոխված ե դրությու-
 նը, և այլևս չենք տեսնում
 առաջվա դժոխքը. այսոր շատ
 ե բուժված վերքը. բանվորա-
 գյուղացիական լայնհոգի ու
 անվրեժ, յեռանդուն ու խո-
 հեմ կառավարությունը Հա-
 յաստանի տանջված ժողո-

վրդին հեղափոխական կար-
միր գրոշակի պաշտպանու-
թյան տակ առած՝ զբաղված
և շինարարական աշխատան-
քով:

Սիրելի փոքրիկ ընկեր!
Հոկտեմբերյան Մեծ Հեղա-
փոխութեանն ենք պարտա-
կան, վոր մեր պետական բոլոր
շրջաններում այժմ կատար-
վում է մեղվաջան, անդուլ,
ստեղծագործական աշխա-
տանք, և մեր ժողովուրդը
այժմ խաղաղութեամբ իր աշ-
խատանքի պտուղն է վայե-
լում, ներքին ու արտաքին
սարսափներից ազատված:

Մի քիչ եւ այսպիսի խա-
ղաղ կյանք, և մեր ժողովուր-
դը վտաքի կը կանգնի, և վոչ
վոքի ոգնութեան կարիքն
այլևս չենք զգա:

Կեցցե Հոկտեմբերյան Մեծ
Հեղափոխութիւնը, վոր պար-
գենց մեզ այդ խաղաղու-
թիւնը և ազատութիւնը:

Կեցցե Բանվորա-Պլուղա-
ցիական Խորհրդային Իշխա-
նութիւնը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0836012

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

- № 1. Դպրոցը և կոմունիզմը
- № 2. Ազգային հարցն ու կոմունիզմը
- № 3. Կրոնը և կոմունիզմը
- № 4. Պրոլետարական դատարանը
- № 5. Բնագիտությունը աշխատ. դպրոցում
- № 6. «Նվեր պատանիներին»
(Հոկտ. հեղ. առթիվ)
- № 7. Աշխատանքի մեծ տոներ
(մայիս 1)
- № 8. Հայոց լեզվի ծրագիրը
- № 9. Հրահանգ ուս-ինն քաղաքացու գիտելիքների ծրագիրը
- № 10. «Խոնչ և կոմունիզմը»
Աշխատանքի դպրոց Պ. Բլոնսկու
- № 11. «Վճրն և աշխատ. դպրոցը»
պր. I.
- № 12. «Աշխատ. դպրոցի մանկապարտեզը» պր. II
- № 13. «Աշխատ. դպրոց I աստիճանի» պր. III
- № 14. «Մեր առաջնությունը» (Հոկտ. հեղ. առթիվ)

